

« Արդ աստիտեցաւ թշկաց պիտեանի
« գիրքս որ կոչի անվամբ մոփրատար, ի
« ինկոյոյ Տէր Գրիգորի որդի Ղազարի բա-
« հաւիրի եւ ձարտար թշկացեանի, որ ետուր
« գրել զպատասխան գիրքս այս վայելումն
« իւր անձինն. ի թվն. Հայոց ՌձձԲին ի
« քաղաքն Սեբաստիայ ձեռամբ կիրակոսի
« հոստատի եւ անպիտան ընթերցողի : Արդ
« սիրելիք իմ, անմեղադիր լեր սղարանաց
« խոնց գի կար մեր այսքանն եւ եւ որ կար-
« ղայր կամ օրինակէք յիշէք ի մարբափայլ
« յաղօթս ձեր գի եւ դոք յիշեալ յիշիք ի
« Գրիտոսոս Աստուծոյ մերմէ ամեն » :

Կարեւոր է արդարեւ այս Յիշատակա-
րանը, ուրկէ կը տեղեկանանք թէ այս
Երկհատոր թշկարանն ընթերցանուած է
Սեբաստիա քաղաքին մէջ ՌձձԲ (1172 |
551) == 1723ին կիրակոս անուն դպիրի
մը ձեռքով, եւ կ'ուսանինք նաեւ թէ այդ
քաղաքին մէջ 18րդ դարու սկիզբը ապրած
է, ՂԱԶԱՐ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԻՆԸ անուն բժիշկ
մը, որ իրեն համար ամփոփ գրել կու տայ
Ամբրոսի վարժի գործերը :

Սեբաստիա այսպէս 17-18 դարուն
խակական օրրանն մը կ'ըլլայ Հայ բժիշկ-
ներու, Ասար, Պունեսթ եւ Ղազար Սե-
բաստացիներու, որոնք եթէ չըլլային՝ շատ
բան անծանօթ մնացած պիտի ըլլար Հայ
բժշկական պատմութեան :

Սոյն Յիշատակարանովս կ'աւարտի Զե-
ուագրս, որուն ամենավերջին էջին վրայ,
դարձեալ քէլ-Ներսէսեան փանոս կը գրէ
Յիշատակութիւն մը այսպէս.

« Ի վայելումն քննիչսեանց թոս հոդ եւ
« փոշի, մեղսպարտ եւ քրիստոսի ծառայ
« փանոսի, եւ որ հանդիպի այս պատմական
« գրգոյս, որ է մարմէտէր, կարգալով կամ
« օրինակելով, յիշեցէք ի մայրքայփայլ յա-
« ղօթս ձեր եւ մի հայր մեղափի մի, Հայր
« իմ յակոբ եւ մայր իմ մարիամն եւ որդի
« իմ յակոբձիկն եւ դոք յիշալ յիցիք ի
« քրիստոսի աստուծոյ ամին » :

Յիշատակագրութեանն ներքեւ փանոս
իր ստորագրութիւնը ընդելուզեալ կերպով

անգամ մ'ալ կը դնէ բայց աւելի խոշոր
եւ նաեւ թրքագիր ՎՎՎ թուականը ու
հետը՝ « տոնկոս » բառը, ուրկէ կարելի
է հետեցնել, թէ այս Երկերը Հատորը
գնած է նախ 1732ին իսկ առաջինն ալ
1737ին :

Բժշկարանիս Հատորները ուրիշ նորու-
թիւն մը չեն ներկայացներ, բայց Ամբ-
րոսի վարժի միւս ձեռագիրներուն բաղդա-
ստեղծեանը ու ամբողջացմանը մեծապէս
ծառայելու յարմար են :

ՏՕԲԹ. ՎԱՆՐԱՄ Յ. ԹՈՐՈՍՅԱՆ

Վեհեմիկ — Ս. Ղազար

6 Յունուար 1923

(Շարունակելի)

ՄՈՒՃԱՆԻ ԶԱՅԱՐՄԱՅԱԸ ԳԱՆԱԼԸ

(Աղբ-գր-իւն - Պարտ-իւն - Կոմ-իւն - Բե-իւն)

(Շար. տես Բազմ. 1924, էջ 200)

6. Մուշիգան

Վերին - Փօնաքիցի դէպի հարաւ, մօտ կէս
Փարսախ հեռաւորութեամբ, մի ընդարձակ դաշ-
տի վրայ կանգնած է հայաբնակ Մուշիգանը.
դա Դուդուլու սարի մօտ ընկած, գեղեցիկ դիր-
քով եւ զով ու առողջարար կլիմայով մի փոքրիկ
գիւղ է, որի արեւմտեան եւ հարաւային կողմերը
զարդարւած են ուռնիքների եւ քիապուտաների
տեղակայանքով, իսկ արեւելեան կողմում փռւած
է մի փոքրիկ պարտէզ :

Գիւղի հիմքը դրել է տասն եւ մէկ տարի ա-
ռաջ, 1909 թիւն. բնակիչները եկել են Հայա-
բնակ Մամուքա եւ Լիվաքեան գիւղերից, 1913
թիւն, 24 տնով : Թէ ինչու է գիւղը Մուշիգան
կոչւում, գիւղացիներն իրենց էլ չգիտեն : Այժմ
տներն թիւն է 13, 60 հոգի չնչով, որի 35ը
արական է եւ 25ը իգական. դրանից երկու տունը
խօշընջին են : Տները մի յարկանի են, որոնցից
մի մասը չինւած են իրար կողքի, իսկ մի մասը
կառուցւած է առանձին - առանձին, շատերի
առաջ կան փոքրիկ պարտէզներ :

Գիւղը երկու ղօնց է կամ 24 հաքբա. պատկանում է Մահմուտ խան Զօլաբուր Սուլթանին: Գիւղացիները հողագործի են. նրանք մշակում են աղայի հողերը և բերքի^{1/4}, մասը տալիս են նրան: Բացի այդ՝ գիւղատէրը տարեկան առնում է նաև 800 լիտր դարման և 100 բեռ գազ (վառելիք):

Գիւղացիներն այստեղ ոչխարի, կովի, ձիու հարկ չեն վճարում և շնորհիւ աղայի ցոյց տաւ՝ բարեացակամ վերաբերմունքի՝ ապրում են բաւարար և հանգիստ պայմանների մէջ:

Գիւղի հողը մեծ մասամբ շրովի է. օգտուում են «Շիրխանի» աղբից, որ գտնուում է գիւղի հարաւային կողմը և ունի մի ջրաղացաչափ ջուր. դա սկիզբ է առնում «Նիրխուսու» ձորից և օժապտոյտ հոսելով դէպի հարաւ, ոռոգում է գիւղի արտերը:

Այստեղ հողը բերրի է և արգանանդ. հերկում են վէցկիով և ցանում ցորեն, գարի, հաճաք, նուշի, ոսպ, սիսեռ, գետնախնձոր, լուբիա, կոբեկ և այլն:

Գիւղը ոչ եկեղեցի ունի, ոչ էլ դպրոց: Գիւղացիները մեծամասնութեամբ անգրագէտ են:

Գիւղի հարաւային կողմը, 100 քայլ հեռաւուրութեան վրայ գտնուում է գերեզմանատունը, իսկ դէպի արեւելք, 100 քայլ հեռու, փռւած է խանի շաւն. դա աղիւսայէն, բաւական գեղեցիկ մի շինութիւն է, որի հիւսիսային կողմը զարդարւած է մի փոքրիկ ծառաստանով:

Գիւղի քանդակութեան է Պ. Յովհաննէսը, որ բարեթիւր և անշահախնդիր մի տանուուէր է:

7. Շամբուլլու

Այս գուտ հայաբնակ փոքրիկ և աննշան գիւղը գտնուում է Մուշիգանից մի ֆարսախ հեռու, դէպի հիւսիս-արեւմուտք, Քեաւլար սարի մօտ. յրապարտւած է յարդախառն ցեղից շաղախւած բնակիչների պարսպով և ունի մի դարբաս: Գիւղն իր անունն ստացել է Շահբուլլա բառից. շահ պարսկերէն նշանակում է թագաւոր, արքայ, իսկ բուլլա՝ աղբիւր, ուրեմն Շահբուլլաղի նշանակութիւնն է շահի աղբիւր:

Գիւղը երեք տարայ հիմնարկութիւն է. բնակիչները եկել են Չահարմահալի հայաբնակ գիւղերից 1917 թիւն և այժմ բաղկացած են 9 տնից, 46 շնչով, որի 27ը արական է և 19ը ինչական: Տները մի յարկանի են, հողաչէն և շինւած են կողք-կողքի:

Հողը խառնական է. հողատէրն է Սարգսյ

Մահմաւ (Ղօյաւ Զօսէյին խան), որ 72 հաքբա հող ունի: Գիւղացիները հողագործի են. նրանք մշակում են աղայի վեց ղօնց հողը և բերքի^{1/4}, մասը տալիս են նրան: Այստեղ գիւղացիները ծանրաբեռնւած չեն հարկերով. նրանք ապրում են հանգիստ պայմանների մէջ:

Վարելահողերը շրովի են. օգտուում են Շահբուլլաղի աղբից, որ մի ջրաղացաչափ ջուր է արտադրում. դա բոլորում է Քեաւլար սարի ստորոտից և օժապտոյտ հոսելով դէպի հարաւ՝ ոռոգում է գիւղի արտերը:

Հողը հերկում են վէցկիով և ցանում են նոյն հացաբոյսերն և այլ ցանովի խոտեր:

Գիւղը գուրկ է թէ՛ դպրոցից և թէ՛ եկեղեցուց: Գիւղացիները մեծամասնութիւնը անգրագէտ են. ընդամենը 20 հոգի գրագէտ կայ:

Գիւղի քանդակութեան է Պ. Արշալույս Յ. Տէր - Սուքիասեան, որ զարգացած ու բարեկիրթ մի անձնաւորութիւն է և միաժամանակ օժտւած է իւզանկարչի ձիրքով: Դրեւ է նա 1883 թիւն Չահարմահալի Մահմուտան գիւղում: Գրել կարգալը սովորել է իր պապի և հօր մօտ: Մանկութիւնից սիրել է նկարչութիւնը և ամէն մի տեսած նկարն ընդօրինակել, բայց միշտ իր պապից գաղտնի:

«Պապս - գրում է նա մեզ - չէր սիրում նկարչութիւնը և միշտ ինձ սաստում էր. քանի անգամներ էլ այդ պատճառով ծեծ կերայ, բայց չկարողացայ աչքի թող կենել. ճարտարտ առաւուսները շատ շուտ էի վեր աննում, ճրագ վառում, վերցնում մի հին գիրք, բաց անում. բայց ով էր կարդում, միայն մի կտոր թուղթի էր, որ ուշքս գրաւել էր և ես նկարում էի հա նկարում »:

Նկարչութեան սէրը նրան զգում է Նոր-Ջուղա, որպէս զի մի վարպետի մօտ ծանօթանայ գոյների հետ: Այսպէս Նոր-Ջուղայում են ոչ մի վարպետ նկարիչ չի գտնում և միայն նկարչութեան գոյներ ձեռք բերելով՝ վերադառնում է գիւղ, ուր ինքնաշիտարութեամբ այնքան է առաջադիմում, որ նկարում է Չահարմահալի բոլոր եկեղեցիների տաճարներն ու խաչվառները: Բայց մի հանգամանք նրան ղգբախոտցուն է: Համագիւղացիներից մի քանիսը նախանձելով նրա նկարչական առաջադիմութեան վրայ, անհիմն քրապարտութիւններով զրգուում են նրա դէմ գիւղատիրոջ՝ Աբգօլլա խանի, որ գրաւում է նրա տան կար - կարասիների մեծ մասը, ջրաղացի, ծառերը, նկարչական գործիքները և մօտաւորաւ

պէս 10(X) թուամանի փաստ հասցնում։ Նորա վրայ նա յուսահատ թողնում է Մամուռան և անցնում Շահբուլաղ, ուր այժմ լուիկ-Յնիկ, վերջին և վեցկին իրար խաչաձեւած, քարշ է տալիս իր կեանքը։

Հատուտ է, որ եթէ նա անցնի գեղարւեստական շփոխարկ, իր վրձինով պիտի կարողանայ ծառայել հայ գեղարւեստին։ Յանկալի էր, որ մեր գեղարւեստութիւնը հարուստները փերկէին նրան այդ խուլ անկիւնից։

8. Սինազան

Սինազան պատի գեղ է,
կհրճեմք լիքը հղ է.
Հանքի կօնք, խաւա եղ է,
կնունք կօնք, տղը նեղ է:

Գիւղացիներն այս գիւղն անանում են մօտաւայ Սինազան տարի անունով, որ ընկած է Շահբուլաղից դէպի հիւսիս-արեւմուտք, մօտաւորապէս մի քառորդ ֆարսախ հեռու, մի բարձր դաշտի վրայ։ Նոյնպէս գուտ հայաբնակ է և ընդամէնը 35 տարւայ պատմութիւն ունի. չորս շապատած է յարդախառն ցեղով չղախառն քառակուսի պարսպով և ունի մի դարբաս. բաժանում է երկու թաղի։ 1) Ժամի դալէ և 2) Դրսի դալէ։ Այս տեղ փողոցները ծուռ ու մուռ են, իսկ տները մեծ մասամբ երկյարկանի։

Բնակիչները զաղթել են այստեղ 1892 թւին, հայաբնակ Սիրաք, Մամուռան և Լիվանեան գիւղերից։ Այժմ բաղկացած են 40 տնից, 178 շնչով, որի 81ը արական է և 97ը իգական։ Սրանից 10 տունը խօշընչի են, իսկ պանգըրիս տունքնան մէջ գտնուում են երկու հոգի։

Գիւղն ունի Ս. Աստուածածին անունով մի եկեղեցի, որ հիմնել է 1897 թւին. դա առաստաղածակ, անլուք մի եկեղեցի է. ունի զանգակատան նման մի բան, որից կախած են երկու փոքրիկ զանգակներ։

Այստեղի կրթական գործն աննախանձելի զբոսութեան մէջ է գտնուում. Ս. Աստուածածին եկեղեցու փոքրիկ սենեակը ծառայում է իբրև դպրոց, ուր այս տարի (1920 թ.) սովորում էին 25 աշակերտ — ուհիներ, որ ուսուցչուհու (Որ. Հնդիկէ) ցովհաննիսեանի, որ նշանակած է Նոր-Ջուղայի Գիւղական Յանձնախմբի վարչութիւնից) և մի ուսուցիչ — քանախայ (Տէր — Եզնիկ Մարգարեանի) ղեկավարութեամբ։ Գաղթոցն անբարեկարգ է և զուրկ նիւթական և ուսումնական միջոցներից։

Գիւղացիները մեծամասնութեամբ անգրագէտ են. ընդամէնը 10 հոգի գրագէտ կայ։

Գիւղում գոյութիւն ունի «Արաւց» բարեգործական անունով մի ընկերութիւն, որ հիմնել է 1919 թւին. դա Նոր — Ջուղայի համանուն ընկերութեան մի ճիւղն է, որի գլխավոր նպատակն է օգնել գիւղի դպրոցին։ Այժմ ընկերութիւնը բաղկացած է 20 անդամներից։

Գիւղը հարուստ է վարելահողերով, որոնք մեծ մասամբ ջրովի են և փուած են գիւղի արեւելեան, հիւսիսային և հարաւային կողմերը, իսկ արեւմտեան կողմում են գտնուում դէմի հողերը։ Ջուրը ջրամուղի է, գտնուում է գիւղի հարաւ — արեւելեան կողմը. դա սկիզբ է առնում Քեալլար տարի փէշից և մի փոքրիկ առու կազմելով՝ հոսում է դէպի Հարաւ — արեւելք, ապա օձապտոյտ ընթացանով՝ ոռոգում է գիւղի դաշտավայրերը։ Յանում են նոյն հացաբոյսերն ու հացահատիկները։

Գիւղն առաքի-կալածատիրական է. պատկանում է Սէյդալ, Հայիաթ-Ղուլի և Բալթլար — Ասմէտ — Խօսրոֆ երեք եղբայրներին, որոնց մէջ բաժանած է գիւղի պեղ դօնգ հողը։ Գիւղացիները հողագուրկ են. նրանք մշակում են առաքիների հողերը և արդիւնքի՝, մասը տալիս են նրանց։ Բացի այդ՝ գիւղացիներից տարեկան առնում են.

Ուշարին	10 չալի
Կովին	2 դան
Էգ ձիւն	3
Ջորուն	3 »

Սակայն այս չէ բոլորը։ Գիւղատէրերն իրենց քամահոյքի համաձայն անունով են նաև 100 լիգրին չորս լիգր ցորեն և զարի, 144 բեռ դարման, 72 հաւ, 144 բեռ զազ (վառելիք), այլ և գիւղացիների 20 զոյգ եզներն և 24 մարդ աշխատեցնում են իրենց գործերի վրայ։ Իսկ այս տարի գիւղն ուղարկել են ինը ձի, որպէս զի գիւղացիներն իրենց հաւաք պահեն, ուղիղ երեք ամիս։ Սրանց վրայ աւելացնենք և այն, որ երբ խաները հարստիք են ունենում, գիւղացիներից ձրի առնում են յարդ, հաւ, ձու, զազ. նոյն հիւնդիթն է տեղի ունենում, երբ խաների ընտաւ նիքները անդամներից մէկը մեռնում է։ Այս անանուն հարկերի հետեանքով՝ այստեղի գիւղացիութիւնն էլ գտնուում է տնտեսապէս քայքայւած դրութեան մէջ։

Գիւղն ունի մի ջրղոց, որ գտնուում է գիւղից 50 քալ հեռու, արեւելեան կողմը. իսկ այգի-

ները փուռած են գիւղի հարաւային կողմը, 200 քալ ճեղքաւորութեան վրայ, Զէշմա - Նազար աղբրի մօտ:

Գիւղի գերեզմանատունը գտնուում է հիւսիսային կողմը, 300 քալ ճեղքաւորութեան վրայ, մի տափարակ բլրի վրայ:

9. Ալլուուլլաղ

Աինազանից դէպի հիւսիս, քառորդ ֆարսախ հեռու, մի ընդարձակ հարթութեան վրայ փուռած է Աղբուլլաղը, որ Լիվանսանից յետոյ Չահար - մահալի ամենահին գիւղերից մէկն է. հիմքը դրեւ է հայոց 1080 թւականին. 298 տարի առաջ: Բայց ծայրայեղ հարստահարութիւնների հետեւանքով գիւղացիները լքել են գիւղը և գաղթել: Անուհետև, 1902 թւին, հայերը Բօլլաղ - շուց (այժմ աներակ է) նորից են հաստատուել և շինարարել գիւղը: Թէ գիւղի անունն ի՞նչից է առաջացել, յայտնի չէ: Այսօրն միայն պարզ է, որ Աղբուլլաղ պարսկերէն է և նշանակում է ճերմակ աղբիւր:

Իր դիրքով գիւղը բաւական զեղեցիկ է. արևմտեան և հարաւային տարածութիւնը զարդարւած է ուռենիների և բարդիների անկարաններով: Անկայն գիւղի զարդը կազմում են երեք քոյր առուները, որոնք օժապտոյտ հոսելով՝ ոռոգում են գիւղի արտերն ու արօտավայրերը: Դրանք սկիզբ են առնում պարսկաբնակ Բօլլաղի գիւղի հարաւ-արևելեան կողմում բլրոտ բազմաթիւ աղբիւրներից, որոնք միմեանց հետ միանալով՝ կազմում են մի մեծ առու. դա ոլորապտոյտ հոսելով՝ գիւղից 15 վայրկեան հեռաւորութեան վրայ բաժանւում է երեք ճիւղի, որոնցից երկուսն օժապտոյտ հոսելով՝ ոռոգում են գիւղի հիւսիսային կողմի արտերը, իսկ երրորդը ոռոգում է հարաւային կողմի արտերը: Բացի այս առուներից՝ գիւղի հարաւային կողմում կան նաև երկու աղբիւրներ, որոնք ոռոգում են նոյն կողմի արտերը: Հացահատիկներն ու հացաբոյսերը նոյնն են:

Գիւղին աւելի փայլ են տալիս, սակայն, հարաւային կողմը, արեւելից-արեւմուտք ուղղուած թեմաք փուռած լեռնաշղթաները, որոնք իրենց բնական դիրքով զեղեցիկ տեսարան են ներկայացնում:

Գիւղը զուտ հայաբնակ է. բաղկացած է երկու դալայից և ունի երկու դարբաս. շրջապատը քառակուսի պատն է հնդերը մեծամասնութեամբ երկյաթական են և ճորաչէն, իսկ փողոցները ծուռ ու մուռ են և կեղտոտ:

Բնակիչները 58 տուն են, 268 շնուղ, որի 128ը արական է և 140ը իգական. սրանից 24 տունը խօշնդի են, իսկ պանդխտութեան մէջ են երկու հոգի:

Գիւղի գրեթէ կենդրոնում կանգնած է Ս. Գրիգոր Լուսաւորել եկեղեցին. դա գրեթէ յաշէն և ներսից փայտաշէն կառուցածքով բաւական մեծ մի եկեղեցի է, որի ձախ պատի վրայ գրւած է.

ՆԱՌՈՒՑԱՆ

ՍՈՒՐ

ԵԿԵՂԵՑԻ

1912:

Գիւղը զուրկ է դպրոցից. գրագէտների թիւը հասնում է 10ի:

Այս գիւղում գոյութիւն ունեն հայ Եղ. Դաշ. «Արծիւ» և «Փայլակ» միութիւնները, որոնք հիմնւել են 1915 թւականին: Դրանց զխաւոր նպատակն է.

Ա. Օգնել Աղբուլլաղի դպրոցին թէ նիւթապէս և թէ բարոյապէս:

Բ. Լուսաւորութիւն տարածել գիւղական ժողովրդի մէջ:

Յիշեալ երկու միութիւններն էլ միացած են Նոր-Զուլայի Հ. Յ. Դաշ. Գետափի ենթակա միւսի հետ: Անդամների թիւն է 40:

Գիւղը վեց զօնք է կամ 72 հարբայ, որի կէսը սեփականութիւնն է Սալար-Ալթաֆին (Ալթաֆարիսանին), իսկ միւս կէսը պատկանում է Սարդար Զաֆարի որդիներին՝ Սալար Մախսութ (Մէհերի Գուլի խանին), Սարմալ-Մօլթ (Էլիազ-խան) և Սկեանդար խաներին: Գիւղացիները հողագործ են. նրանք իրենց սերմով ցանում են խաների հողերը և նրանց տալիս բերքի 1/3 մասը, Բացի այդ՝ խաները տարեկան առնում են.

Ուշաբի	10 շալի
Կովի	2 դուռ
Էգ ձիուն	3 »
Ջորուն	3 »

Ինչպէս միւս գիւղերից շատերը, այնպէս էլ Աղբուլլաղը ենթակայ է խաների նշուածների և հարստահարութիւններին. նրանք իրենց սովորութեան համաձայն տարեկան առնում են 1800 բեռ (իւրաքանչիւր բեռը 20 լիտր) կանաչ շաւղառ, 120 բեռ յարդ, 50 հաւ, 5-600 ձու, 50 բանուր, որոնցից իւրաքանչիւր երկու օր աշխատում են խաների գործերի վրայ:

Գրիգորյան ունի մի շրապաց և մի կրպակ:
Գերեզմանատունը փուսած է գրիգոր հիւսիս -
արևմտեան կողմը, 160 ֆայլ հեռավորութեան
վրայ, ուր 284 տարւայ տապանաքարեր կան:
Գրիգոր քանդիւնականներն են պ. պ. Գրիգոր
Մանասէրեան և Ոսկան Գալստեանեան. վերջինս
կեղծաւոր և անբարեխիղճ մի տանուտէր է:

10. Մամուլը

Աղբորւղից մօտաւորապէս երկուսուկէս ֆար-
սաք հեռու, դէպի արևմուտք, մի հովտում, հստ
սարի մօտ փուսած է գուտ հայաբնակ Մամուլքա
գիւղը, որ իր դիրքով Չահարմահալի ամենա-
գեղեցիկ գիւղերից մէկն է: Գիւղի արևմտեան և
հիւսիսային կողմերը զարգարած են այգիներով
և պարտէզներով, իսկ արևելեան կողմը պնա-
զարդեալ է ուռենիների ու բարտիների ծառա-
տանով, որի հիւսիսային կողմից, երկու կողմը
լարքով տնկած ծառերի միջով, հանդարտ հո-
տում է մի փոքրիկ առու, որ օժապտոյտ անց-
նելով գիւղի հարաւային կողմից՝ գնում է դէպի
Հաշիաբաղ:

Սակայն Մամուլքան գեղեցիկ է իր բնական
տեսարաններով. նրա հարաւային և արևմտեան
մակերևոյթը ներկայացնում է բարձր և սէգ
սարերի մի շարան, որոնք երևան են հանում
բնութեան գեղեցիկ տեսարաններ: Այս բոլորը
գիւղին տալիս են առանձին շքեղութիւն և վե-
հուծիւն:

Գիւղն սկզբում պատկանելիս է եղել Մըհմա-
մադ-Քաթա բէկին և կոչւել է հէյն նրա անու-
նով. սակայն 70 տարի առաջ, 1850 թւին,
Հօսէյն Ղուլի, իմամ Ղուլի և Ռզա Ղուլի եղ-
բայրները գրաւում են գիւղը և Մըհմամադ -
Քաթա անունը փոխելով՝ կոչում Մամուլքա:

Հայ գիւղացիները գաղթել են այստեղ 1860
թւին, հայաբնակ Սիրաք, Լիվասեան և այլ
գիւղերից:

Այժմ գիւղը Լամբրդուռի է. պատկանում է
Ջալիսօրի կառավարութեան (Ելիսանի և Իլքէգի
բախտարցիներին). Գիւղացիները հողագործ են.
նրանք մշակում են կառավարութեան վեց զօնգ
հողը և շրուի բերքի 2¹/₃ բաժինն իրենք են
վերցնում և մէկը կառավարութեան տալիս, իսկ
դէմից ստացած բերքից տալիս են միայն ¹/₃ մա-
սը: Հաւ տարեկան վճարում են կառավարու-
թեան.

Ունարին . . . 10 չափ
կողին . . . 2 զոան

Էգ ձիուն . . . 2 զոան
Ջորուն . . . 3 »

Խօշընչիները բացի յիշեալ հարկերից տալիս
են.

Գլխահարկ . . . 2 զոան
Իչուն . . . 2 »

Քացի յիշեալներից, կառավարութիւնը տարե-
կան առնում է նաև 15000 լիտր յարդ, 1000
բեռ թաց շաւառ, 300 լիտր չոր շաւառ, 24
հաւ, 200 ձու, 400 բեռ զագ (վառելիք), 100 հատ
ծառ: Քայց պատկերը դրանով էլ չի վերջանում:

Գիւղացիները պէտք է հոգան կառավարութեան
կողմից գիւղ եկող ծառաների ծախսերը, որ մօ-
տաւորապէս հասնում է 80-100 թումանի:

Այստեղ հողը մեծ մասամբ շրուի է. հերկում
են վեցհիով և ցանում նոյն հացաբոյսերը:

Ջրի կողմից գիւղը բաւական հարուստ է.
ունի երկու առու և եօթը շրմուղ, որոնք են.
Գեօզալ դարա, Բեաթի, Արաթէլ, Նաշիսունի,
Յածի, Վիրեի և Սարգարբաղ. սրանցից ա-
ռաջին չորսը, Գեօզալ դարա, Բեաթի, Արա-
թէլ, Նաշիսունի, գիւղի արևելեան կողմից օժա-
պտոյտ հոսելով՝ ոռոգում են գիւղի հիւսիսային
կողմի արտերը: Յածի շրմուղը, որ բնկած է
գիւղի արևմտեան կողմը, իր մակուռի մօտ բա-
ժանում է երկու ճիւղի, որոնցից առաջինն օ-
ժապտոյտ հոսելով՝ ոռոգում է գիւղի հարաւային
կողմի արտերը, իսկ երկրորդը ոռոգում է հիւ-
սիս-արևմտեան կողմի արտերը: Վիրեի շրմուղն
անցնում է գիւղի հարաւային կողմից և ոռոգում
է արևմտեան կողմի արտերը: Սարգարբաղը
գիւղի արևմտեան կողմից օժապտոյտ հոսելով՝
ոռոգում է արևմտեան կողմի արտերը: Իսկ ա-
ռուներն սկիզբ են առնում Ջալիսօրի շամբում
բղիտը բազմաթիւ աղբերներից, գրանք նախ
օժապտոյտ հոսում են մինչև Համալալի սարի փէշը
(սարի մօտ կայ «Ղառ» անունով մի խոր բաց-
ւածք, ուր լցւում է շրի մի մասը), ապա ուղը-
մուղ պտոյտների գործելով գնում են դէպի ա-
րևմուտք մինչև Չառու, որտեղից յետոյ ուղ-
բապտոյտ հոսելով դէպի Մամուլքա, ոռոգում են
գիւղի հիւսիսային կողմի արտերը: Հետո՛հիւ շրերի
այս առատութեան՝ Մամուլքայի դաշտավայրին
արտագրում են ամէն տեսակ բերքեր և հացա-
հատիկներ:

Գիւղը բազկացած է երկու թաղից 1) Գրիսի
ղալէ և 2) Միշի զալէ. շրջապատը քառակուսի
պատ է և ունի երկու դարբաս: Տները մի և
երկայրկանի են. չինւած են կողք կողքի. փողոց-

ները կեղտոտ են և ծուռ ու մուռ: Այժմ քիա-
կիւնները 127 տուն են, 583 շնչով, որի 285ը
իգական է և 298ը արական: Դրանք 50 տունը
խօշորհին են. պանդխտութեան մէջ են 22 հոգի,
որոնք զտնուում են Նասերի, Նոր-Ջուղա, Թէն-
րան, Լեւկաստան և Լնդոն: Վերջինիս մէջ
գիւղի երկտասարգները Պ. Կարօ Մինասեանը
սովորում է. բժշկութիւն: Նա ընդունակ է ազ-
նի մի երկտասարգ է, որ շնորհիւ իր յատկու-
թիւնների գրաւել է Լնդոնի Բրօք. Բժիշկների
ուշադրութիւնն ու համակրանքը: Խոստանում
է փայլուն ապագայ:

Այստեղի կրթական գործն այնքան էլ միջ-
թարական չէ. գիւղի հիւսիսային կողմը փուած
է Պօղոս Կարապետեան՝ դպրոցը, որ 25 տար-
ւայ պատմութիւն ունի: Հիմնւել է 1895 թ.ին,
օժանդակութեամբ Պօղոս Կարապետեանի: Շէն-
քը մի յարկանի է և բաղկացած է տասնը և մէկ
սենեակներից, մի սրահով: Գարոցի տիպն ան-
որոշ է: Այս տարի (1920 թ.) սովորում էին
30 աշակերտներ, մի ուսուցչով: Գիւղացիների
մասը միայն գրագէտ է:

Գիւղի կենդրոնում կանգնած է Ս. Աստա-
ծածին եկեղեցին. դա ջահարմահալի մեծ եկե-
ղեցիներից մէկն է, որ կառուցւել է 1868 թ.ին.
ներսից զարդարւած է չորս քարէ սիւներով. ունի
երկու զանգակ:

Եկեղեցին ունի նաև եօթը ձեռագիր անետա-
րան, որոնք պահոււմ են մի առանձին սրբու-
թեամբ. դրանք են.

Ա. «Նրադկամէր»՝ Դա թղթի վրայ գրւած
կաշէկազմ և հաստափոր մի անետարան է, որի
առաջին վեց էջերը զարդարւած են սիւնազարդ
նկարներով, որոնք իրենց բովանդակութեամբ
կրօնական են:

Բ. «Համայի»՝ թղթեայ, կաշէկազմ, ան-
պահոյճ փաթիլի մի անետարան է:

Գ. «Ս. Գեորգ»՝ Նոյնպէս թղթեայ, կաշէ-
կազմ հաստափոր մի անետարան է, որի առջևի
27 էջերը զարդարւած են ոսկեզօծ նկարներով,
որոնք անդրադառնում են Գաբրիէլ հրեշտակի
Ս. Կոյս Մարիամ մօր յայտնութեան և Յիսուսի
համբարածման պատմութեան շուրջը:

Դ. Անանուն, կարմիր թաւեայ կազմով, հաս-
տափոր մի անետարան է, որի ձախ երեսը զար-
դարւած է արծաթեայ խաչով, իսկ առջևի 21
էջերը նկարւած են գունազեղ պատկերներով,
որոնք կրօնական բովանդակութիւն ունին, օր.
աշխարհի ստեղծագործութիւնը, Աքամի գրախ-

տից արտաքսւելը, Յիսուսի խաչելութիւնը,
Մկրտութիւնը և այլն:

Ե. Նոյնպէս անանուն և անպահոյճ անետա-
րան է, որի ձախ կազմը զարդարւած է խաչե-
րով. գրւած է թղթի վրայ:

Ջ. Թղթեայ, կանաչ թաւեայ կազմով անե-
տարան է, որի ձախ երեսը զարդարւած է ար-
ծաթեայ խաչով:

Կ. Կաշէկազմ, մեծ և հաստափոր մի անետա-
րան է, որի սկզբի երեք և ետևի երկու թերթերը
մագաղաթ են: Անետարանը զարդարւած է 17
կրօնական նկարներով, որոնք գծւած են բաւա-
կան յաջող վրձինով:

Բացի սրանցից՝ Պ. Կարապետ Ղազարեանի
մօտ կայ «քժիշկ» անունով մի անետարան. դա
թաւեայ կազմով, մագաղաթեայ ընտիր մի ա-
ւետարան է, որի նմանը չկայ ամբողջ ջահար-
մահալի. ֆէրիա գաւառներում և ոչ էլ Նոր-Ջու-
ղայի Ս. Ամենափրկեան վանքի մատենադարա-
նում: Անետարանի ձախ կազմի վրայ կայ ար-
ծաթեայ մի խաչ. բաղկացած է 518 էջից և
զարդարւած է 10 կրօնական ոսկեզօծ նուրբ
նկարներով, որոնք գծւած են գեղարւեստագէտի
վրձինով: Գրւած է Մեծարդեան մանր բոլորա-
գրով. իւրաքանչիւր գլուխն սկսում է անետա-
րանիչների ոսկեզօծ նկարադրանքով:

Յիշեալ պարոնը անետարանը զբւլ է մի ա-
ռանձին սենեակում, ուր ուխտատեղի է դարձրել
և օգտւում է խաչահամբոյրներով:

Գիւղում գոյութիւն ունին հետևեալ ընկերու-
թիւնները.

1. «Օյմանակի Հ. Յ. Դ. Դարազադէր ըն-
կերութիւն»: Այս ընկերութիւնը ջահարմահա-
լում գոյութիւն ունեցող բարեգործական ընկե-
րութիւնների շարքում ամենահին ընկերութիւնն
է, որ իր ուրոյն գործունէութեամբ քիչ թէ շատ
շօշափելի արդիւնք է ցոյց տալիս գիւղացիների
ցաւոտ կենցաղում:

Ընկերութիւնն ունի 18 տարւայ պատմութիւն.
հիմնւել է 1902 թ.ին օր. Խաչիսթուն Էլիա-
զեանի, պ. պ. Սիմէոն Գովհան Սիմէոնեանի և
Օհան Մինասեանի նախաձեռնութեամբ, որոնք
անդամներին անանում են «գող - աւագակ»
իսկ ընկերութիւնն էլ կոչում «աւագակների
ընկերութիւն»: Սակայն շնայելով հալածանք-
ների՝ ընկերութեան անդամներն անշեղ անսայ-
թաք առաջ են տանում իրենց գործունէութիւնը
և միութիւնը դնում աւելի հաստատուն հիմքերի
վրայ: Եւ համարեա թէ ընկերութիւնն այսօր

Չահարամհալի միութենաների շարքում առաջ-
նակարգ տեղ է զբաղում:

Թէ ընկերութիւնն ի՞նչ դեր է կատարել գիւ-
ղական կենսութեամբ, այդ ցոյց է տալիս հետեւեալ
պատկերը:

1916-17 թ. Միլակերտի որբերին ուղարկել
է 79 դռան 10 շայի: Այդ այն տարին էր, երբ
Փէրիա գաւառի հայաբնակ Միլակերտ գիւղի
աւազակապետ Սալար-Մախսուտի կողմից աւեր-
ւեց և գիւղացիները յետին չքաւորութեան մատ-
նելած գաղթեցին դէպի Նոր-Ջուղա, Նասէրի և
այլ տեղերում: Ահհրաժեշտ էր չուտափոյթ օգ-
նութեան հասնել խեղճ գիւղացիներին և ահա
ընկերութիւնն կատարում է իր պարտականու-
թիւնը:

1918-19 թ. Փէրիայի որբերին և աղքատնե-
րին տալիս է 41 դռան, իսկ Մամուքայի շու-
նետներին՝ 140 լիտր ցորեն:

1919 Յունար 1ին Ամադաբադի, Բալըղուի
և Մամուքայի չքաւորներին, որբերին և սովեալ-
ներին տալիս է 237 դռան և 29 լիտր ցորեն:

Նոյն 1919 Յունար 6ին Մամուքայի «Պողո-
սեան» դպրոցի ուսուցիչներին՝ Պ. Պ. Աբգար
Յովհաննիսեանին և Մկրտում Մկրտչեանին տա-
լիս է 240 դռան:

Ահա այս է ընկերութեան 1902-20 տարւայ
գործունէութիւնը:

Այսօր ընկերութեան անդամներն ձգտում են
իրենց գործունէութիւնն աւելի ընդարձակել և
աւելի լայն չափով օգտակար դառնալ թէ՛ դպրո-
ցին և թէ՛ գիւղին:

Ընկերութեան նիւթական միջոցները կազմում
են անդամովճարները և մասամբ էլ միութեան
փողոց ստացւած տոկոսները:

1919 թ. Մայիս 25ին Ընկ. միացել է Նոր-
Ջուղայի Հ. Յ. Դ. Գետափի Ենթակօմիտէի հետ:

2. «Չոր Ալլամ Ալլանց Բարեգործական
ընկերութիւն»-ը, Հիմնել է 1916 թ-ին Գէորգ Խա-
չիկեանի, Կատուր Սիմօնեանի և Դարվէթի
Աստածատրեանի նախաձեռնութեամբ: Սա Նոր-
Ջուղայի «Ալլանց» բարեգործական ընկերու-
թեան մի ճիւղն է, որի ծրագրի էական մասերն
են.

Ա. Նիւթական օգնել Մամուքայի չքաւոր ազ-
գաբնակչութեան:

Բ. Նպատել իրթութեան տարածման գործին
Մամուքայում, իսկ ապագային՝ միջոցնե-
րը ներած հանգամանքներում՝ նաև միւս
հայաբնակ գիւղերում:

Գ. Տարածել գիւղատնտեսական գիտելիքներ,
բերել տալ այդ ճիւղի վերաբերեալ գրքեր,
թերթեր և սերմեր՝ գիւղերում ցրելու
համար և գիւղացիներին գործնականապէս
ծանօթացնելու համար երկրագործական
և գիւղատնտեսական նորագոյն ձեւերի
հետ. բերել տալ նաև գիւղատնտեսական
գործիքներ, հիթէ դրամական միջոցները
ներեն:

Դ. Պաշտպանել տեղական ազգային հաստա-
տութեանց շահերը:

Ե. Համերաշխութիւն և կապ ստեղծել Մա-
մուքայի բոլոր ազգ. հաստատութիւնների
հետ:

Ընկերութիւնը 1919 թ-ին օգնել է Մամու-
քայի աղքատներին 92 դռանով, իսկ Հաջիա-
բադու եկեղեցու համար շինել է տեւ 42 դռան
արժողութեամբ մի դագաղ:

Այժմ ընկերութիւնը բաղկացած է 42 հոգուց:

3. «Հ. Յ. Դ. Ալլա» ընկերութիւն: Այս
ընկերութեան հիմքը դրել են Պ. Պ. Դաւիթ
Մարտիրոս Ընջղուլեան, Աբգար Աբրահամ Զօհ-
րաբեան և Սուքիաս Մարտիրոս կարապետեան,
որոնք 1916 թ. Յունար 5ին համախմբելով
կազմում են մի ծրագիր, որի նպատակն է.

Ա. Նիւթապէս օգնել Մամուքայի ազգ. դպրո-
ցին:

Բ. Օգնել Մամուքայի և գլխաւորապէս Չա-
հարամհալի չքաւոր հայ դասակարգին:

Գ. Օգնել Չահարամհալ եկող բժշկին:

1920 Օգոստոս 9ին Ընկերութեան անդամնե-
րը միանում են Նոր-Ջուղայի Հ. Յ. Դ. Ենթա-
կօմիտէի հետ:

Ընկերութեան անդամներ թիւն է 29:

4. «Հ. Յ. Դ. Ալլադոյս» ընկերութիւն:
Հիմնել է 1919 Յունիս 1ին Սուրեն քահանայ.
Տէր-Գրիգորեանի, Ղուկաս Խ. Մանսուրեանի,
Մկրտիչ Ռ. Մանսուրեանի, Մանասէր Ղ. Մա-
նսուրեանի և Ա. Յ. Աբգարեանի նախաձեռնու-
թեամբ: Ընկերութեան գլխաւոր նպատակն է.

Ա. Նիւթապէս օգնել Մամուքայի դպրոցին.

Բ. Հոգ տանել Չահարամհալի գիւղացիու-
թեան լուսաւորութեան գործին:

Ընկերութիւնը բաղկացած է 24 հոգուց:

Միմեանցից անշատ այս ընկերութիւններն
աւելի շօշափելի և դրական ազդիւնք կտան՝ եթէ
միանալով կազմեն մի ամբողջութիւն և հաւա-

քական ոյժերով և համերաշխ ոգով առաջ տանեն իրենց գործունէութիւնը:

Գիւղն ունի երկու քիաղխուղա. պ. պ. Սուլէյման խուղաղաթեան և Մկրտիչ Ռուստամեան. սրանցից առաջինն ագիւր և բարի մի տանուտէր է, իսկ երկրորդը խարդախ և կեղեքիչ մի տիպ է, որ կատարեալ պատուհաս է դարձել գիւղացիների գլխին:

— Հարիր թուման արժէր այգիս, դարձաւ մեզ գիւղացիներից մէկը, Պ. Մկրտիչն ինձ այնքան աջիկ արու (նեղացրեց), որ վերջը 10 թումանով ծախեցի:

— Ոխտը տուն էինք, աւելացրեց մի այլ գիւղացի, պ. Մկրտիչը ասաւ. « Եղ օխտը տունը կը շինեմ մէ դագան » և արաւ, այժմ բոլորն էլ քար ու քանդ ենք եղած:

Գիւղն ունի երեք ջրաղաց, որոնցից առաջինը ընկած է գիւղի արեւելեան կողմը, կէս ֆարսախ հեռու. երկրորդը գիւղի մէջն է, իսկ երրորդը գտնուած է հարաւային կողմը, 150 ֆայլ հեռաւորութեան վրայ:

Գիւղի այգիները փուած են արեւելեան, հիւսիսային և արևմտեան կողմերը. ամբողջ գիւղն ունի մօտաւորապէս 30,000 որի (մէյթ):

Գիւղն ունի երկու գերեզմանատուն. դրանցից մէկը գտնուած է գիւղից 200 ֆայլ հեռու, դէպի հիւսիս, իսկ միւսը ընկած է արեւելեան կողմը, գիւղից 100 ֆայլ հեռաւորութեան վրայ: Այստեղ է թաղած Պարսկահայ յայտնի աշուղ Յարութն օղիւն:

Վիկենսա

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)

1. Տճ՝ « Բազմավէպ » 1922 N° 11 Նոյեմբերի և N° 12 Դեկտեմբերի Թ. Բ.:

ՆՈՐԱՄԻՆ ԿՂԶԻՆԵՐ

Պենկալայի ծոցին մէջ, Պարոնկայի կղզիներուն մօտ կազմուեցաւ անցեալ տարի 10,000 ուտք երկարութեամբ ու 30 ուտք բարձրութեամբ նոր կղզի մը: Զորքորդ կղզին է որ երեսն հկաւ 1923ին մէջ, Ուրիշ երկու կղզիներ ալ երեցան անցեալ ամիսներուն մէջ Գոչինչիկայի և ուրիշ մ'ալ շաբոնի ծովերուն մէջ:

ԼԵԶՈՒՊԻԻՏԱԿԱՆ

ՀԱՅՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹՂԹԵՐՈՒՆ ՄԵՋ

(տպ. Աղեքսանդրապոլ 1910)

Մանօր. — Մեր ամենէն խրթնախօս հեղինակն է Մագիստրոս, որ կարծես դիտումս կ'ընտրէ կամ չգտած պարագային կը յերիւրէ անլուր և անխմանալի բառեր: Անկա հաճոյք կը զգայ, երբ ժամանակին գիտունները կը կարգան իր գրածները և բան չհասկնալով՝ իրենց տգիտութիւնը կը խոստովանին: Ասով Մագիստրոսը՝ ժամանակին հասկացողութեամբ՝ բոլորէն աւելի գիտուն, բոլորէն աւելի փայլուն աստղ մը կը դառնայ:

Մագիստրոսի թղթերը առաջին անգամ բառաքաղած է ՆՂԲ, բայց կարգ մը բառեր՝ որոնք կամ ձեռով անստոյգ և կամ իմաստով բոլորովին անծանօթ կը մնային, իր էջերէն դուրս վտարած է: Գուրբը մնացածներէն մաս մը Առձեռն բառարանը մեկնած և առած է: Վերջին անգամ Հ. Գ. Մէնէվիչեան շատ մեծ յաջողութեամբ լուծեց Գամազտականը՝ որ Մագիստրոսի ամէնէն խրթին գրուածքներէն մէկն էր, որով անծանօթ բառերէն թիւ մը պակսեցաւ: Ասոր յաջորդեց իմ Մ'ըզուզ փանաքի լուծումս, որ հրատարակուած է Հանդ. ամս. 1923, 231-286: Ասոնցմէ դուրս մնացած բոլոր անծանօթ բառերը կ'ուզեմ հաւաքել հոս, ո՛չ թէ զանոնք լուծելու անխրաբործելի մտադրութեամբ, այլ պարզապէս ի մի ամփոփելու համար կատարելիք աշխատանքը և ասով բառապրողներուն դիւրութիւն մ'ընծայելու: Այս բառերը մեկնելու կրնան ձեռնարկել առնոց՝ որոնք ձեռքի տակ ունին հին ձեռագիր քերթողական բառարաններ: Ասոնցմէ դուրս մեզի համար առ այժմ ուրիշ միջոց չկայ:

1. Ամսիկ տես անհատի:

2. Արախոյրն « պապաչեւ »: Որ յերե-